Ծով aliz Բանուշյան

Եթե մարմնիդ վրա դեռ չես զգացել սերը

Եթե մարմնիդ վրա դեռ չես զգացել սերը,

Եթե քո ուսերի մերկ փոսերում

Քեզնով հարբած նրա տաք շուրթերը

Դու չես տեսել ոնց են բույրդ սիրում . . .

Եթե չկա հիշողություն գոնե

Համբույրներից փշաքաղված քո մատներում

Եթե նույնիսկ քեզ երգեր են ձոնել,

Բայց քո մաշկին քամու շունչ չեն բերում . . .

Դու չգիտե՛ս՝ ինչ է սերը . . . փախի՛ր . . .

Եթե քո մազերը չեն սողացել

Այդքան քեզ մոտ դեմքի վրա,

Եթե որովայնդ չի դողացել,

Թարթիչների հպումներից նրա . . .

Եթե չկա հիշողություն գոնե

Համբույրներից փշաքաղված քո մատներում

Եթե նույնիսկ քեզ երգեր են ձոնել,

Բայց քո մաշկին քամու շունչ չեն բերում . . .

Դու չգիտես՝ ինչ է սերը, փախի՛ր . . .

08 . 01.2019